600.0037.15.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2017 թվականի №37Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի №88Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի ապրիլի 16-ի «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №88Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0538 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) գործողության ժամկետը մինչև 2030 թվականի ապրիլի 20-ն է, որից կառուցման ժամանակահատված՝ մինչև 2017 թվականի փետրվարի 20-ը,

բ) Ընկերությունը սույն թվականի հունվարի 27-ին դիմել է Հանձնաժողով՝ Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը տասն ամսով երկարաձգելու հայտով,

գ) Ընկերությունը սույն թվականի փետրվարի 13-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ նշելով, որ առկա են Կայանի շենքի և գլխամասային հանգույցի զբաղեցրած մակերեսի չափով հողամասերի նպատակային նշանակության փոփոխության և գրանցման հետ կապված խնդիրներ, և հաշվի առնելով Ընկերության ֆինանսական ծանր վիճակն ու վարկերով ծանրաբեռնվածությունը՝ խնդրել է այդ փաստաթղթերի ներկայացման ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի մարտի 5-ը,

դ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ)

28-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ և Կարգով նախատեսված փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնել մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը,

ե) Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը մինչև 2017 թվականի փետրվարի 20-ն է, ուստի Ընկերությունը պարտավոր է Կարգի 28-րդ կետով սահմանված փաստաթղթերը՝ այդ թվում Կայանի և գլխամասային հանգույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները հանձնաժողով ներկայացնել մինչև 2017 թվականի փետրվարի 20-ը կամ Կարգի համաձայն Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը անհրաժեշտ է երկարաձգել, ինչի վերաբերյալ Ընկերությունը հայտ է ներկայացրել Հանձնաժողով,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասերը, Կարգը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել №0538 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2017 թվականի փետրվարի 20-ը» բառերը փոխարինելով «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0538 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի հունիսի 16-ի №652-6027 գրությամբ Հանձնաժողով ներկայացված, 2016 թվականի հունիսի 3-ի №652-4622 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված №ԲԵՆ15/77-01 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված քսանչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարից տասներկու միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել քսանչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի փետրվարի 3-ը գործողության ժամկետով:

3. «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 փետրվարի 2017թ.